

«ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» ՓԲԸ

«Երևանի Կ. Դեմիքսյանի անվան հ.139
ավագ քաղաքացի» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ

Տնօրեն՝

Ս.Օհանյան

Կատարող՝

Լ. Գրիգորյան

ԲՈՎԱՆԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ _____	4
1.1 Տեղեկություններ ձեռնարկողի մասին _____	4
Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը _____	6
1.2 Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը _____	9
2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՄՆԵՐ և ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ) _____	10
Ա. Օբյեկտի տեխնիկական բնութագիրը _____	10
Բ. Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ _____	11
Գ. Կանաչապատումն արեկարգում _____	13
Դ. Շինարարական աշխատանքների կատարման սխեմա և շինարարական նյութեր _____	13
Ե. Կատարված աշխատանքների ճարտարապետական համառոտ բնութագիրը _____	15
3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ _____	22
3.1 Տարածքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները _____	22
3.2 Կլիման _____	22
3.2.2 Օդի որակ 26	26
3.2.3 Աղմուկ 26	26
3.3 Թափոնների և այլ նյութերի կառավարում _____	27
3.4 Սոցիալ-տնտեսական պայմանները _____	27
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ _____	30
4.1 Ռիսկերի գնահատում _____	30
4.2 Օդի աղտոտում _____	30
4.3 Աղմուկի և թրթռումների ազդեցություն _____	31
4.4. Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն _____	32
4.5. Բնապահպանական միջոցառումներ _____	33
4.5.1. Մթնոլորտային օդ 34	34
4.5.2 Ջրային տեսուրսներ 34	34
4.5.3. Հողային տեսուրսներ 34	34
4.5.4. Աղմուկ 35	35
4.5.5. Կենսաբազմազանություն 35	35
4.5.6 Թափոնների և այլ նյութերի կառավարում 36	36
4.6. Աշխատանքի անվտանգություն և առողջություն _____	36
4.7 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը _____	36
4.8 Փոխհատուցում _____	37

5. ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ և ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ _____	38
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ _____	39
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ _____	45

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Տեղեկություններ ձեռնարկողի մասին

Նախատեսվող գործունեություն	ՀՀ Երևան համայնքի Նոր-Նորք վարչական շրջան, Ստեփանյան փող. հ. 3 հասցեում գտնվող՝ «Կ. Դեմիքոյանի անվան հ. 139 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգում
Նպատակը	«Կ. Դեմիքոյանի անվան հ. 139 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգում
Նախագծի պատվիրատու	ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Ձեռնարկող	«Երևաննախագիծ» ՓԲԸ
Ձեռնարկողի հասցե	Քաղաք Երևան Փ. Բուզանդի 1/3
Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ, էլ փոստ, հեռախոս	mail Yerpro@yandex.ru Հեռ. 56 27 11
Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը	ՀՀ ք.Երևան Նոր-Նորք վարչական շրջան, Ստեփանյան փող. հ. 3 հասցե
Կառույցի ընդհանուր մակերեսը	1,4363հա

Սույն նախնական գնահատման հայտում ներկայացված նախատեսվող գործունեության ձեռնարկող է հանդիսանում «Երևաննախագիծ» ՓԲԸ, որի հասցեն է ք. Երևան Փ. Բուզանդի 1/3: Գործունեության վայրը՝ ՀՀ ք.Երևան, Նոր-Նորք վարչական շրջան, Ստեփանյան փողոց հ. 3:

«Երևաննախագիծ» ՓԲԸ մտադիր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ք.Երևան, Նոր-Նորք վարչական շրջան, Ստեփանյան փողոց հ. 3 հասցեում գտնվող <<Կ. Դեմիքոյանի անվան հ. 139 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի վերակառուցման նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ ստանալ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (21 հունիսի, 2014) հոդված 14-ի կետ 6-ի համաձայն, Նոր-Նորք վարչական շրջան, Ստեփանյան փողոց հ. 3 հասցեում գտնվող <<Կ. Դեմիքանյանի անվան հ. 139 ավագ դպրոց >> ՊՈԱԿ-ի վերակառուցման նախագծային փաստաթուղթը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման և փորձաքննության, քանի որ ընդհանուր կառուցապատվող տարածքի մակերեսը գերազանցում է 1500 մ²-ը (կառուցապատվող հողամասի մակերեսը կազմում է 1,4363 հա):

Ելնելով շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանից, նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի, որի համար պահանջվում է նախնական գնահատման հայտի պատրաստում: Նախնական գնահատման հայտի բովանդակությունը մշակվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջների համաձայն:

Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների գնահատման և վերլուծության արդյունքներն ամփոփվել են սույն նախնական գնահատման հայտում: Գնահատման նպատակն է, նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում, շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա հնարավոր վնասակար ազդեցությունների կանխատեսումը, կանխարգելումը, նվազեցումը կամ բացառումը:

Գործունեության իրականացման ընթացքում հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերն են՝

Օդային ավազանի աղտոտում՝ շինարարական աշխատանքների և շինարարական տեխնիկայի շարժիչների շահագործման ընթացքում,

Շինարարության փուլում մերձակա բնակչությանը պատճառվող անհանգստություն՝ մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից,

Շինարարական մեքենաների և տեխնիկայի աշխատանքով պայմանավորված տեղի երթևեկության խափանում,

Վերակառուցման նախագծի շրջանակներում նոր հողատարածքների յուրացում չի նախատեսվում,

Աշխատողների առողջությանը հասցվող վնաս՝ գործունեության իրականացման շինարարության և շահագործման ընթացքում:

Հայտում բնապահպանական ելակետային տվյալների հիման վրա առաջարկվել և ամփոփվել են վերը նշված ազդեցությունների և շրջակա միջավայրի

մյուս բաղադրիչների վրա կանխարգելմանն ու նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր:

Նախնական գնահատման հայտի մշակման համար օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

Նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը,

Նախատեսվող գործունեության ընթացքում հավաքագրված տվյալներն ու տեղեկատվությունը,

Տարածաշրջանի վերաբերյալ վերլուծությունները, սխեմաները,

Շահագրգիռ կողմերի հետ բանակցություններն ու քննարկումները:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման փուլում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Աշխատանքային նախագծի հիման վրա նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մշակում,

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումների անցկացում,

Բնապահպանական փորձաքննության նպատակով նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի և հանրային քննարկումների արդյունքների (ներառյալ՝ արձանագրություն, մասնակիցների ցանկ տեսաձայնագրություն) ներկայացում շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման, փորձաքննության փուլերում:

Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

<<Կ. Դեմիք՝ անի անվան հ. 139 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի վերակառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև:

ՀՀ Սահմանադրություն (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<**Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը**>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) - Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքի, 14-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրությամբ փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների դասակարգվում են երեք կատեգորիայի՝ «Ա», «Բ», «Գ», ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2007թ.) - կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Աշխատավայրերում, բնակելի և հասարակական վայրերում, բնակարանային տնտեսության վայրերում, ինչպես նաև շինարարական հրապարակներում աղմուկի թույլատրելի սանիտարական նորմերը սահմանվում են ենթաօրենսդրական ակտով:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004) - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարականաղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: ՀՀ Կառավարության 121-Ն որոշումը, որը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող

սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք (2000) - կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման ընթացակարգերը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14, 15, 16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

1.2 Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

Սույն նախնական գնահատման հայտում ներկայացված նախատեսվող գործունեության կառուցապատող է հանդիսանում ՀՀ քաղաքաշինության կոմիտեն՝ ի դեմս <<Կ. Դեմիքոյանի անվան հ. 139 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի:

Նախատեսվող գործունեության անվանումն է՝ ՀՀ Երևան համայնքի Նոր-Նորք վարչական շրջան, Ստեփանյան փող. հ. 3 հասցեում գտնվող՝ <<Կ. Դեմիքանյանի անվան հ. 139 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի (նոր մասնաշենքերի) վերակառուցում: Վերակառուցման համար Երևանի քաղաքապետարանի կողմից 2020թ. ապրիլի 2-ի N 01/18-07/2-10689-291 որոշմամբ տրվել է նախագծման թույլտվությունը (ճարտարապետա-հատակագծային առաջադրանք): Նախագծի մշակման համար հիմք է ծառայել կառուցապատողի հայտը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքների 07. 04. 2005թ. հ. 1282228 վկայականը, 01. 02. 2020թ. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի հ. 02/27. 3/548-2020 գրությունը:

Նախատեսվող գործունեությունը գտնվում է Երևան, Նոր-Նորք վարչական շրջան, Ստեփանյան փող. հ. 3 հասցեում (կառուցապատվող հողամասի մակերեսը կազմում է 1. 4363հա, իսկ ուսումնական մասնաշենքը, որը բաղկացած է 3 մասնաշենքերից՝ 8598. 4մ², ինչպես նաև կաթսայատունը՝ 28. 7մ² մակերեսով: Հողամասը գտնվում է նպատակային նշանակության բնակավայրի և գործառնական նշանակության կառուցապատման գոտում: Գրանցված իրավունքի տեսակը՝ անհատույց մշտական օգտագործման: Նախագծվող հողամասի հարևանությամբ Նելսոն Ստեփանյան փողոցն է: Տարածքի հարևանությամբ առկա են գործող ինժեներական գծերը և հաղորդակցուղիները:

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՄՆԵՐ և ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ)

Ա. Օբյեկտի տեխնիկական բնութագիրը

Դպրոցը տեղակայված է Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Նելսոն Ստեփանյան փողոց թիվ 3 հասցեում:

Դպրոց հաճախող աշակարտների փաստացի թիվը **329**:

Հողամասի մակերեսը **1.4363 /հա/**

Դպրոցը բաղկացած է 3 հիմնական մասնաշենքերից, և կաթսայատնից, որից՝

1. **Ուսումնական մասնաշենք** 8598.4 քմ մակերեսով, բաղկացած 3 մասնաշենքերից, որից՝
 - 3 հարկանի մասնաշենք՝ ե/բ համակցված կրող կոնստրուկտիվ էլեմենտներով, ե/բ կլորանցքավոր ծածկի սալերով, լանջավոր տանիքով:
 - 1 հարկանի մարզադահլիճի և հանդիսությունների դահլիճի մասնաշենք՝ ե/բ համակցված կրող կոնստրուկտիվ էլեմենտներով, ծածկված ե/բ կողավոր ծածկի սալերով
 - 2 հարկ ունեցող ուսումնական մասնաշենք՝ ե/բ համակցված կրող կոնստրուկտիվ էլեմենտներով, ե/բ կլոր անցքավոր ծածկի սալերով, լանջավոր տանիքով
 - 3 հարկանի մասնաշենք /կից 2 հարկանի մասնաշենքին՝ ե/բ համակցված կրող կոնստրուկտիվ էլեմենտներով, ե/բ կլորանցքավոր ծածկի սալերով, լանջավոր տանիքով
2. **Կաթսայատուն**՝ 28.7 քմ մակերեսով, բետոնե պատերով, մետաղական թիթեղից ծածկ ունեցող, միահարկ բետոնե պատերով կառույց:

Բ. Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն՝ ի դեմս Երևաննախագիծ ՓԲԸ-ի՝ նախատեսում է, հիմնանորոգել Նոր-Նորք վարչական շրջան, Ստեփանյան փող. հ. 3 հասցեում գտնվող <<Կ. Դեմիրճյանի անվան հ. 139 ավագ դպրոց>>-ի մասնաշենքը: Նախատեսվում է հարակից բնակելի շենքերից վերգետնյա մասի հեռավորությունը գործող նորմատիվային պահանջների համաձայն: Նախագծով ապահովվել է հարակից տարածքների շահագործման նորմատիվային պահանջները: Հատակագծային լուծումները մշակել է համաձայն պատվիրատուի առաջադրանքի հաշվի առնելով նորմատիվային պահանջները:

Վերակառուցման նախագծով դպրոցն ապահովում է ավելի քան 600 սովորողների միջին մասնագիտական կրթական պահանջները: Այն իրենից ներկայացնում է չորս հիմնական (a, b, c, d) մասնաշենքերից բաղկացած համալիր:

a, b եվ c մասնաշենքերը եռահարկ են, բայց ունեն տեխնիկական հարկ, որտեղով անկացված են կոմունիկացիաները: Նշված մասնաշենքերում հիմնականում տեղաբաշխված են ուսումնական եվ վարչական շենքերը: Ուսումնական դասասենյակները, քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության լաբորատորիաներն իրենց հարակից պահոցներով տեղավորված են a եվ c մասնաշենքերում, ինչպես նաև վարչական բլոկը: Վերջինս ներառում է տնօրենի, փոխտնօրենների, կաբինետները, գրասենյակները: Այս բլոկում առանձնացված է նաև սանհանգույց վարչական աշխատողների համար: Նույն ուղղությամբ, մյուս հարկերում, նույնպես կան

սանհանգույցներ ուսուցիչների համար: Առաջին հարկում, մուտքին մոտ տեղակայվել է բուժկետը, ուսուցչանոցը: Երկրորդ հարկում նախագծված է նաև նախնական զինվորական պատրաստության դասասենյակը, որին կից զենքի պահեստի պատերը ամրանավորված են, իսկ պատուհանի և դռան վրա նախատեսված է ճաղաշար: Ուսումնական բոլոր բլոկներում նախատեսված են ռեկրեացիաներ, աջ և ձախ թևերում՝ նաև սանհագույցներ աղջիկների եվ տղաների համար, ինչպես նաև՝ առանձնացված սանհագույց հաշմանդամություն ունեցող անձանց համար: Ընդհանրապես, վերջիններիս համար ամբողջ շենքը և բացօթյա տարածքների մատչելիությունն ապահովված է թեքահարթակներով, 4 կանգառ ունեցող վերելակով:

Ե մասնաշենքի գլխավոր մուտքի հանգույցը կազմակերպված է հողի նիշից 60սմ բարձրությամբ ընդարձակ հարթակից: Երկու սիմետրիկ մուտքերի կողմերում տեղ են գտել մի կողմից՝ պահակի, մյուս կողմից՝ ոստիկանի հենակետերը: Նախամուտքի կենտրոնական մասում դրված վերելակը և աստիճանավանդակն ուղեկցում են վերև, իսկ կողքերից՝ 317մ² ճաշասրահ: Ճաշարանի խոհանոցային բլոկը ներառում է նորմերով անհրաժեշտ շենքերը և շենքի ետնամասից ունի առանձին մուտք՝ անձնակազմի և մթերքի մատակարարման համար: Ճաշարանի վրա, երկրորդ հարկում կազմակերպված է ընդարձակ գրադարանը, որի երկու մուտքերի հանգույցներում գրադարանավարների առանձնացված հատվածներն են: Միջանկյալ մասում գրադարանից լիարժեք օգտվելու համար տեղադրվելու են թվայնացման, պատճենման և այլ անհրաժեշտ սարքավորումներ: Գրադարանում գրադարակները բաց են դասավորված, որը հնարավորություն կտա շատ ավելի մատչելի և հարմարավետ օգտվելու ֆոնդերից: Երրորդ հարկում, շուրջ 280 նստատեղով, հանդիսատեսային դահլիճն է: Այստեղ ընդարձակ բեմի երկու կողմերում նախագծված են նաև հանդերձարաններ: Բեմի բարձրությունը 90սմ է, բարձրանալու համար բացի աստիճաններից նախատեսված է նաև թեքահարթակ: Հանդիսատեսային դահլիճից եվ գրադարանից տարհանման ելքեր են նախատեսված դեպի շենքին կից մետաղական աստիճանավանդակ: Այս մասնաշենքի երրորդ հարկն ավելի բարձր է (4,2մ) հարակից a և c մասնաշենքերի երրորդ հարկերի բարձրությունից (3,0մ): 2-3-րդ հարկերում նախագծվել է ռեսուրս կենտրոն, որի կենտրոնում գտնվող ամֆիթատրոնն իր աստիճաններով կապում է երկու հարկերը: Նախատեսվում է այն երեսապատել փայտով: Ռեսուրս կենտրոնի հատակները նույնպես փայտով են ծածկվելու, իսկ երկու հարկերն ընդգրկող կորածև մեծ վիտրաժից բացվելու է դպրոցի առջևի բարեկարգ, կանաչապատ տարածքը, ամֆիթատրոնը, ջրավազանը:

Ժ-ն մարզական մասնաշենքն է, ուր նախագծվել է միայն մարզասրահը, որն ունի նաև տարհանման առանձին ելք: Հանդերձարանները (ցնցուղարաններով և սանհագույցով), գույքի պահեստը, մարզիչի սենյակը, հաշմանդամություն ունեցողների սանհագույց-լոգարանը տեղակայված են c մասնաշենքում: մարզական բացօթյա հրապարակը ներառում է ունիվերսալ մարզական միջուկ, վոլեյբոլի, բասկետբոլի համատեղված դաշտ, թեթև ատլետիկայի վազքուղի-թռիչքուղի, մարզական սարքավորումների համար առանձնացված հարթակ: Քանի որ

մարզական բացօթյա մասը բարձրադիր է, նախատեսվել են թեքահարթակ և աստիճաններ դեպի վեր: Ընդ որում տարածքը մարզադահլիճի տարահանման ելքից առավելագույնս մատչելի է: Բացօթյա մարզական ողջ տարածքը ցանկապատվում է (4մ բարձրությամբ): Իսկ ամբողջ դպրոցը նախատեսվում է ցանկապատել մետաղական 2,4մ բարձրությամբ ցանկապատով: Դպրոցն ունի 4 մուտքեր դարպասներով, որոնք կապահովեն հրշեջ եվ շտապ օգնության մեքենաների անմիջական մուտքը ողջ տարածք: Կաթսայատանը հարակից տարածքում բացօթյա ավտոկանգառ է նախատեսվում աշխատակիցների մեքենաների և դպրոցականների հեծանիվների համար:

Տարածքն ամբողջովին բարեկարգվում է, տեղադրվում են նստարաններ եվ լուսատուներ: Դպրոցի գլխավոր մուտքի առջև նախատեսված է սալահատակված ընդարձակ հրապարակ, ուր կարելի է կազմակերպել համադպրոցական միջոցառումներ:

Գ.Կանաչապատում և բարեկարգում

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը մոտ 6000քմ, նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել: Բարեկարգման շրջանակներում նախատեսվում է իրականացնել լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները՝ կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում և այլն: Նախատեսել շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու համապատասխան միջոցառումներ: Ապահովել մթնոլորտային օդին, ջրին, բնահողին, ինչպես նաև աղմուկին, թրթռումներին, էլեկտրամագնիսական ճառագայթմանը և այլ բնական և տեխնածին ծագման գործոններին սանիտարական կանոններով և նորմերով, շինարարական նորմերով ներկայացվող նորմատիվ պահանջները:

Դ.Շինարարական աշխատանքների կատարման սխեմա և շինարարական նյութեր

Նախագծի շինարարության կազմակերպման շրջանակներում մշակվել է՝ շինարարական աշխատանքների կազմակերպման նախագիծ՝ նկատի ունենալով ՀՀ կառավարության 12.04.2001թ. հ. 286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի <<ԺԲ>> ենթակետի և 44.1 կետի պահանջները, ինչպես նաև՝ Երևան քաղաքի ավագանու 16.03.2012թ. հ. 405-Ն որոշմամբ սահմանված լրացուցիչ պայմանները: Նախագծի գործողության ժամկետը և մշակման փուլերը տևելու են երկու տարի:

Շին աշխատանքների իրականացման համար նախատեսում է 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական: Նախապատրաստական փուլում կատարվում են հետևյալ աշխատանքները.

- Շին. հրապարակի ժամանակավոր ցանկապատում հետիոտն գլխածածկույթով
- Ժամանակավոր էլեկտրամատակարարում և ջրամատակարարում

- Շին. նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում
- Շին.հրապարակի գիշերային լուսավորվածություն
- Ժամանակավոր շինությունների տեղադրում, ըստ նշված ժամանակացույցի և օրացույցային գրաֆիկի:

- Հողային աշխատանքները փոստրակում և խրամուղիներում կատարվում են “հետ-բահ” եքսկավատորով:

Ապրանքային բետոնը շին.հրապարակ է բերվում պատրաստի վիճակում՝ բետոնատար ինքնաթափերի միջոցով ավտոմատ բետոնա-շաղախային հանգույցից: Ամրանային իրերը պատրաստվում են հատուկ պոլիգոններում, մասամբ շին. հրապարակում:

Շինարարական հրապարակում չի նախատեսվում շինանյութերի, կամ սորուն նյութերի պահեստներ:

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով շին. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Շին.հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից հաստատված դրույթներով, շին.հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակումը հետևում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Քանի որ այս տարածքը գտնվում է քաղաքի բնակելի թաղամասում, ամբողջ շինարարության ընթացքում միջոցառումներ իրականացնել շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ: Փոշուց գերծ մնալու համար տարածքը մշտական խոնավ պահել և ապահովել ռոռգման ջրով:

Թույլ չտալ նորմայից ավել վնասակար արտանետումներ դեպի մթնոլորտ, շին. մեքենաները շին. հրապարակ պետք է մտնեն և դուրս գան մաքուր վիճակով: Բնահողով բարձված մեքենաների թափքը պետք է թրջել և ծածկել պոլիէթիլենային թաղանթներով թույլ չտալով փոշու ամպի գոյացություններ: Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը: Պարբերաբար, և ըստ անհրաժեշտության, կկազմակերպվի շինարարական աղբի տեղափոխում թափոնատեղ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառվել են նախնական գնահատման հայտի հաջորդ բաժիններում՝ բնապահպանական միջոցառումների ծրագրում և բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

Շինարարական նյութերից օգտագործվելու են երկաթբետոն, սրբատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր:

Տանիքածածկի նյութի գույնի ընտրությունը համապատասխանեցնել RA L գունային ներկապնակի 3003, 5021 և 7011 գույներին:

Ապահովել հակահրդեհային նորմատիվ պահանջները: Նախատեսել հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժվելու համար անհրաժեշտ պայմանները:

Ե. Կատարված աշխատանքների ճարտարապետական համառոտ բնութագիրը

Տվյալ նախագիծը կատարված է ճարտարապետական գծագրերի հիման վրա:

Շենքի հաշվարկը իրականացվել է Lira -SAPR 2016 R5 հաշվարկային համակարգի միջոցով: Իրականացվել է շենքի տարածական հաշվարկ վերտիկալ ստատիկ բեռնվածքների և սեյսմիկ ազդեցության տակ թվային և տառային ուղղություններով: Բետոնի դասը ըստ սեղմման B 25:

Նախագիծը իրենից ներկայացնում է 4մասնաշենքից բաղկացած դպրոց: Ամեն մասը առանձնացված է հակասեյսմիկ կարով: Դասուսուցման երեք մասնաշենքերը/ A, B, C / երեք հարկանի են և ունեն նկուղային հարկեր:

Հարկերի բարձրությունն է 3,30մ, նկուղային հարկի խորությունը 2,4մ: Երեք մասնաշենքն էլ ունեն աստիճանավանդակներ, երկրորդ մասնաշենքում նախատեսված է վերելակ: Մասնաշենքերի կրող կոնստրուկցիաները իրականացվում է միաձույլ շրջանակների միջոցով: Շրջանակների քայլը - 7,5մ, թռիչքը -7,2, 3,6 7,2մ: Սյուների չափերն են-50 x 50/սմ/ պարզունակների չափերը՝ 50x 60 /սմ/: Մասնաշենքերի չափերը՝ 18,0մ x 52,5մ, 21,6 x 37,5, 18,0մ x 37,5մ: Երկրորդ մասնաշենքի 3-րդ հարկի բարձրությունը 4,2 մ է, այդ մասնաշենքում է գտնվում դպրոցի դահլիճը, այդ պատճառով երրորդ հարկը ծածկվում է մետաղական ֆերմաներով 21,6 մ թռիչքով: Ֆերմաների քայլը՝ 3,75մ ,սյուների չափերն են՝ 50 x 100/սմ/: Չորրորդ մասնաշենքը իրենից ներկայացնում է սպորտային դահլիճ՝ 16,1մ x 24,5մ չափերով սյուների քայլը՝ 4,9մ , ծածկույթը նախատեսված՝ մետաղական ֆերմաներով ծածկույթը սենդվիչների շերտով, սյուների չափերն են 50 x 70 մ պատերի հաստությունը՝ 40սմ:

Բոլոր մասնաշենքերի պատերի մեջ նախատեսված են ե/բ միջուկներ և կոշտության դիաֆրագմաներ ըստ հաշվարկի: Երեք մասնաշենքի պատերը / ըստ հաշվարկի /նախատեսված են ե/բ-ից 40սմ հաստությամբ:

Զ. Կատարման ենթակա աշխատանքների բնութագիրը

-Ուսումնասիրել համալիրի տարածքը և ձեռք բերել ինժեներակառուցական հետազոտության եզրակացություն, գոյություն ունեցող մասնաշենքերի և կաթսայատան տեխնիկական վիճակի ուսումնասիրության եզրակացություններ /կոնստրուկցիաներում բացումների, ամրանների և բետոնի ամրության լաբորատոր գործիքային հետազոտությունների միջոցով/, ինչպես նաև իրականացնել գեոդեզիական աշխատանքներ:

- Ձեռք բերված եզրակացության արդյունքներով և գոյություն ունեցող շենքային վնասվածության և /կամ ֆիզիկական մաշվածության տվյալների հիման վրա՝ ներկայացնել վերլուծական նյութեր ծախսերի խոշորացված հաշվարկների՝ այլընտրանքային լուծումների (կազմաքանդման, վերակառուցման կամ նորի կառուցման նպատակահարմարության) համադրման և նախատեսվող աշխատանքների հիմնավորման համար
- Հաշվի առնելով օբյեկտի տեղակայման ռելիեֆը և տարածքի առանձնահատկությունները, որպես էլակետային տվյալ կամ ուղեցույց կարելի է օգտագործել ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2018 թվականի փետրվարի 20-ի «Մոդուլային դպրոցների տիպարային նախագծերի կատալոգը» հաստատելու մասին» N 27-Ա հրամանով սահմանված մոդուլային տիպի նոր (արդիական լուծումներով) ավագ դպրոցի կառուցման նախագծային լուծումներից, հակառակ դեպքում՝ մշակել նոր կառուցվող մասնաշենքերի արդի ծավալահատակագծային և կոնստրուկտիվ համակարգի լուծումներ (հիմքեր, պատեր, ծածկեր, բացվածքներ, տանիք)
- Նախագծով նախատեսել ներքին ինժեներական ենթակառուցվածքների /սառը և տաք ջրամատակարարման, կոյուղու, ջեռուցման, էլեկրամատակարարման, գազամատակարարման, օդափոխության և օդորակման, հակահրդեհային ազդանշանման, հրդեհաշիջման, տեսահսկման, կապի, ջրահեռացման/ համակարգերի կառուցում, մասնաշենքի արդիական ներքին հարդարում,
- Նախագծով նախատեսել մասնաշենքի (-երի) համալրում հենաշարժային համակարգի խախտումներ և հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի տեղաշարժն ապահովող անհրաժեշտ նախագծային լուծումներով և սարք-սարքավորումներով (թեքահարթակներ, առանձնացված սանհանգույցներ, բազրիքներ, լրացուցիչ լուսավորություն, ըստ անհրաժեշտության **(եթե շենքը նախագծվելու է երկու և ավելի հարկայնությամբ)** վերհան սարքեր կամ վերելակ (համապատասխան նորմատիվ փաստաթղթերով նախատեսվող այլ միջոցառումներ),
- Նախագծով նախատեսել տարածքի բարեկարգում, կանաչապատում և լուսավորություն, արտաքին խաղահրապարակի կառուցում, ըստ անհրաժեշտության **(եթե մասնագիտական եզրակացությամբ դրանք ենթակա կլինեն վերակառուցման կամ ապամոնտաժման)** կառուցել-վերակառուցել արտաքին հաղորդակցուղիներ և այլն **(բաշխիչ կայաններ, ենթակայաններ, գազամատակարարման, ջրամատակարարման, կոյուղու, ջրահեռացման ապահովման սարքեր-սարքավորումներ)** ըստ անհրաժեշտության և տեխնիկական պայմանների՝ ծրագրի շրջանակներում անհրաժեշտ տարածքի ընդգրկումով.
- Համայնքին բնորոշ բնակլիմայական պայմանների հաշվառմամբ՝ նախատեսել այլընտրանքային էներգիայի օգտագործման հնարավոր միջոցներ (արևային ջրատաքացուցիչներ և ֆոտովոլտային պանելներ)՝ օբյեկտում տաք

ջրամատակարարում և էլեկտրամատակարարում ապահովելու համար (**առանձին նախահաշվով**)

-Նախագծման ընթացիկ աշխատանքները աշխատանքային կարգով համաձայնեցնել պատվիրատուի հետ՝ միաժամանակ ապահովելով նորմատիվ պարտադիր պահանջները և օգտագործելով արդի մոտեցումներ:

-«Երևանի Կ. Դեմիչյանի անվան թիվ 139 ավագ դպրոց » ՊՈԱԿԻ շենքի կառուցման նախագծի էլեկտրատեխնիկական մասի գծագրերը մշակված է համաձայն ճարտարապետական շինարարական գծագրերի և պատվիրատուի կողմից տրված նախագծման առաջադրանքի: Նախագծում նախատեսված է դպրոցի ներքին էլեկտրամատակարարման ցանց և արտաքին լուսավորություն: Ներքին էլեկտրամատակարարման ցանցի սնուցման համար նախատեսվում է կառուցել վահանային սենյակ, որտեղ տեղադրվում է գլխավոր բաշխիչ վահանը, բաշխիչ պահարաններ N1 և N2: Վահանային սենյակից իրականացվում է դպրոցի, կաթսայատան էլեկտրամատակարարումը և տարածքի արտաքին լուսավորությունը: Դպրոցի մասնաշենքերում, յուրաքանչյուր հարկում, էլեկտրաուժային մասի հատակագծերի վրա նշված տեղերում, տեղադրվում են հարկային վահանակները, որոնցից իրականացվում է հարկի լուսավորության և վարդակների ցանցերի էլեկտրամատակարարման բաշխումը (տես վահանակների միագծանի մոնտաժային սխեմանները): Լույսի աղբյուր հանդիսանում են LED լուսատուները: Սենյակում ընդհանուր լուսավորության համար նախատեսված է լուսատուների տեղական կառավարում, բացառությամբ սպորտ դահլիճի, որի լուսավորության կառավարումը իրականացվում է վահանակից, ավտոմատ անջատիչների միջոցով: Հարկերի հիմնական անցուղիներում և հասարակական տարածքներում, նախատեսված է վթարային լուսավորություն՝ լուսատուներ ներկառուցված մարտկոցով, որոնք աշխատում են առանձին էլեկտրասնուցման խմբերով և հոսանքի բացակայության ժամանակ ապահովում են աշակերտների և աշխատակազմի տարահանումը սենյակներից, միջանցքներից և աստիճանավանդակներից: Նախատեսված է նաև էվակուացիոն լուսավորություն, որը իրականացված է ելքի դռների վերնամասերում տեղադրված էվակուացիոն լույսերի և ելքի ցուցանակների միջոցով: Տվյալ լուսատուները ներկայացված են նույնպես ներկառուցված մարտկոցով, նրանք նորմալ աշխատանքային ռեժիմում /լարման տակ/ գտնվում են անջատված վիճակում: Էլեկտրաէներգիայի ընդհատվելու դեպքում վերջիններս ավտոմատ կերպով միանում են իրենց մեջ ներկառուցված տեղային անկախ աղբյուրին ապահովելով 2 ժամյա աշխատանքին ռեժիմ, որը բավարար է տարահանման համար: Վահանակները տեղադրվում են հատակից 1.5մ բարձրության վրա, ընդհանուր նշանակության վարդակները և անջատիչները, ուսուցիչների աշխատասենյակներում, 0.8մ բարձրությամբ, դասասենյակներում վարդակները տեղադրվում են հատակի նիշից 0.2մ բարձրությամբ, իսկ անջատիչները՝ 1.8մ/համաձայն ՀՀՇՆ-31-03.01-2014 կետ 164-ի/: Ջրատաքացուցիչների

Էլեկտրասնուցման վարդակները տեղադրվում են 1,8 մ բարձրության վրա, իսկ խոհանոցային հատվածի վարդակները՝ համապատասխան կահույքի՝ 1,1-1,2 մ: Լուսավորության և խրոցակային վարդակների ցանցը անցկացվում է հրակայուն պղնձե մալուխով, խողովակով, սվաղի շերտի տակ: Ուժային ցանցի էլեկտրամատակարարման մոնտաժը իրականացվում է նույնպես հրակայուն պղնձե մալուխով: Նկուղային հարկում էլեկտրաուժային մալուխները անցնում են նախապես կառուցված սակառների վրայով, որոնց մեջ նախագծում նախատեսված մալուխները, իրենց որակական հատկանիշների շնորհիվ, թույլատրվում են իրականացնել փնջերով, առանց խողովակների: Այնուհետև, սակառներից դեպի վահանակներ, մալուխները տեղադրվում են խողովակի մեջ, պատերով, նախապես կառուցված ակոսներում: Ներքին լուսավորության և վարդակների էլեկտրամատակարարման ցանցը իրականացվում է 3 լարանոց (L,N,PE): Էլեկտրաուժային ցանցը իրականացվում է 5 լարանոց (L1,L2,L3,N,PE): Նախագծում նախատեսված վերելակի էլեկտրասնուղումը իրականացվում է ԳԲՎ-ից առանձին մալուխային գծով, դեպի դեկավարման արկղ, որը պատվիրվում է վերելակի հետ և ծրագրավորվում է գործարանում:

Էլեկտրահաղորդագծերի մոնտաժը իրագործել սանիտարատեխնիկական ցանցի մոնտաժից հետո, մինչև ծածկի կարերի լցափակումը և միջնորմների հետ միաժամանակ: Սանիտարատեխնիկական սարքավորումների տեղադրվածությունը, բարձրությունները հատակագծի վրա տես ՋՕ և ՋԿ բաժիններում:

Նախագծում նախատեսված է իրականացնել պոտենցիալների հավասարեցման միջոցառումներ: Գլխավոր բաշխիչ վահանի մեջ տեղադրվում է գլխավոր հողանցման հաղորդաթիթեղ, (ԳՀՀ) որն էլ հողանցվում է արտաքին կոնտուրով: ԳՀՀ-ին միացվում են շենք մտնող մետաղական խողովակները, ե/բետոնե կոնստրուկցիաների մետաղական ամրանները, օդափոխության համակարգի մետաղական օդատարները: Հողանցման կոնտուրն իրականացվում է հողանցման էլեկտրոդներից (անկյունակ $\perp 50 \times 50 \times 5$, $n=6$, $L=2.5$ մ) և այդ էլեկտրոդներն իրար կապող — 40×5 մմ շերտապողպատից:

Միացումներն իրականացվում են եռակցումով, ընդ որում եռակցման կարի երկարությունը պետք է լինի $l_{կար} \geq 2B$,

որտեղ՝ $B=40$ մմ շերտապողպատի լայնությունն է: Կարերի բարձրությունն ընդունվում է շերտապողպատի հաստությամբ: Հողանցման կոնտուրի դիմադրությունը չպետք է գերազանցի 4 Օհմը՝ տարվա ցանկացած եղանակին: Հակառակ դեպքում ավելացնել էլեկտրոդներ: Իրականացնել չափումներ համապատասխան լիցենզավորված լաբորատոր կազմակերպության կողմից:

Նախագծում նախատեսված է դպրոցի տարածքի արտաքին լուսավորություն 2 տիպի լուսատուներով, ստորգետնյա մալուխային գծերով, 2 խմբով: Արտաքին լուսավորության սնուսման և դեկավարման վահանակը տեղադրվում է վահանային սենյակում: Վահանային սենյակը կազմակերպված է A մասնաշենքի առաջին հարկում: Վահանայինից իրականացված է նաև կաթսայատան էլեկտրամատակարարումը: Էլեկտրամատակարարումը իրականացվում է

ստորգետնյա մալուխային գծերով: Ստորգետնյա սնուցման մալուխը անցկացվում է խրամուղու մեջ, գետնի մակերեսից 0.7մ խորությամբ, շենքերի և կառույցների հիմքերից ոչ պակաս 0.6մ հեռավորությամբ ՄՄԾ-2008 գլուխ 2.3.84, գլուխ 2.3.85: Մալուխի փռումը գրունտի մեջ իրականացնել համաձայն ՄՄԾ-2008 գլուխ 2.3.83 և 2.3.99: Զուգահեռ տեղադրման ժամանակ հեռավորությունը (հորիզոնական) մալուխային գծերից մինչև խողովակաշարերը (ջրամատակարարման, կոյուղու, գազի) պետք է լինի ոչ պակաս 1մ, նեղված հատվածներում, խողովակներով 0.25մ, ՄՄԾ-2008 գլուխ 2.3.88, 2.3.89: Մալուխային, ջրամատակարարման, կոյուղու, գազի գծերի և ջերմային ցանցի հատման ժամանակ, մալուխային գիծը հատման տեղում անցկացվում է խողովակի միջով, պահպանելով նեղված հատվածներում 0.25մ հեռավորություն մալուխային և այդ գծերի միջեղ, ՄՄԾ-2008 գլուխ 2.3.95, 2.3.96: Մալուխների փռումը կանաչ գոտում իրականացնել համաձայն ՄՄԾ-2008 գլուխ 2.3.87 (պահպանել մինչև 1մ հեռավորություն ծառերի բները և 0.7մ թփուտները): Նախատեսված է դպրոցի մասնաշենքերի շանթապաշտպանություն: Համաձայն ՔԺ 34 21 122-87 հրահանգի դիտարկվող կառույցը պատկանում է շանթապաշտպանության III կատեգորիայի: Կառույցի տանիքում իրականացվում է ցանց 6 մմ կլոր պողպատից, իրակացավում են իջեցումներ դեպի պարագծով կառուցված շանթապաշտպան կոնտուր 0.6մ խորության վրա: Ցանցը իրականացվում է տանիքի հիդրոտեխնիկական շերտի տակ: Իջեցումները իրականացվում են մասնաշենքի արտաքին պատով, երեսապատման շերտի տակ:

Դպրոցի մասնաշենքերում ապամոնտաժված էլեկտրասարքավորումները, ստեղծված հանձնաժողովի որոշմամբ, որակավորել և հանձնել համապատասխան իրավական մարմիններին:

Բոլոր էլեկտրամոնտաժային աշխատանքները կատարել համապատասխան գործող ՄՄԾ-2008, 7-րդ հրատարակչության:

Է. Զրամատակարարում և ջրահեռացում

Երևան քաղաքի թիվ 139 ավագ դպրոցի կառուցման նախագծի ջրամատակարարման և ջրահեռացման մասը մշակվել է համաձայն առաջադրանքի, ճարտարապետա-շինարարական գծագրերի, ՇՆ-ՋԿ 40-01.01-2014 գործող շինարարական նորմերի և կանոնների, ինչպես նաև Վեոլիա Ջուր ընկերության կողմից 08.01.2020թ տրված ՄԵ -49 տեխնիկական պայմանի:

Զրամատակարարում և Կոյուղի մասի նախագծում նախատեսվում են ներքին և արտաքին հետևյալ համակարգերը՝

- ա. խմելու տնտեսական ջրամատակարարում
- բ. կենցաղային կեղտաջրերի կոյուղի
- գ. ոռոգման համակարգ
- դ. տարածքի հեղեղատար կոյուղի

Նախագծային լուծումները ընդունված են համաձայն ՇՈՒՄ 2.04.01-85: Սանտեխնիկական սարքերը մոնտաժվում են համաձայն ՇՈՒՄ 3.05.01-85:

1. ԽՄԵԼՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՋՐԱՄԱՍՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Վերակառուցվող դպրոցի ջրամիացումն իրականացվում է գործող Ø 200 մմ տրամաչափի ջրագծից: Ջրամիացման մոտ տեղադրվում է հորհակահրդեհային հիդրանտով, իսկ սահմանազատման կետում՝ հոր ջրաչափական հանգույցով:

Դպրոցի համար նախատեսված է երկու մուտքագիծ: Մուտքագծերի անցքը պատվում է ջրագազաանթափանց էլաստիկ նյութով: Տարածքի հակահրդեհային անվտանգությունն ապահովելու համար նախատեսված է հակահրդեհային երկու հիդրանտներ: Համակարգի համարնախատեսվել է DN 100 (110x6,6) պոլիէթիլենե, իսկ հորերի մեջ՝ Ø108x4,0; Ø89x4,0 և Ø57x3.5 մմ տրամաչափի պողպատե էլեկտրաեռակցվող խողովակներից:

Կաթսայատան ջրամատակարարման սնուցումն իրականացվում է շենքից, ջերմատարի բաքի միջով Ø 57x3.5 մմ տրամաչափի պողպատե էլեկտրաեռակցվող խողովակով: Ջրամատակարարման խողովակաշարը նախատեսվում է իրականացնել 1.2 մ. միջին թաղման խորությամբ: Գոյություն ունեցող կոյուղու հետ հատման մասում, ջրամատակարարման խողովակը անցկացնել կոյուղու խողովակի վերին շուրթից 30սմ բարձր:

2. ՏՆՏԵՍԱ –ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԿՈՅՈՒՂԻ (Կ1)

Համակարգը նախատեսված է սանտեխնիկական սարքերից տնտեսա-կենցաղային կեղտաջրերի հեռացման համար: Համակարգի խողովակները նախատեսված է իրականացնել ներքին ցանցի համար D 50 մմ և D 110 մմ, կոյուղու պոլիվինիլ քլորիդե (PVC) TY 21-26-100-80, իսկ արտաքին համակարգինը՝ D 160մմ տրամագծի ծալքավոր խողովակներից:

Արտաքին համակարգի համար, բոլոր միացման տեղերում, շրջադարձային անկյուններում, թեքությունների և տրամագծերի փոփոխության, ինչպես նաև ուղիղ հատվածներում համապատասխան թույլատրելի հեռավորության վրա նախատեսվում է կառուցել դիտահորեր:

Կոյուղու համակարգի դիտահորերը՝ կլոր կտրվածքի հավաքովի երկաթբետոնե էլեմենտներից են, սեյսմիկ գոտիների համար նախատեսված լրացուցիչ ամրանների ծախսով: Կոյուղու համակարգը նախատեսվում է իրականացնել 1,1 մ միջին թաղման խորությամբ:

3. ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ոռոգման համակարգն իրականացվում է, մոտակայքի գոյություն ունեցող գծից: Ջրամիացման մոտ նախատեսված է հոր՝ կարգավորիչ փականով Ø50 մմ: Ոռոգման համակարգը նախատեսված է իրականացնել պոլիպրոպիլենե DN 50 (63x5.8); DN32 (40x3,0) խողովակներից:

Ըստ նորմերի 1մ2/կանաչ տարածքի ոռոգման համար անհրաժեշտ է 10լ ջուր: Ոռոգումն իրականացվում է ոռոգման ծորակների և ռետինե խողովակների միջոցով:

Ջրամատակարարման համակարգը նախատեսվում է իրականացնել ստորգետնյա 0.6 մ. թաղման խորությամբ:

Աշխանը տարածքի ամենացածր կետում նախատեսված ոռոգման համակարգի ծորակից անհրաժեշտ է ջուրը դատարկել, ձմռան ամիսներին խողովակների սառչելուց խուսափելու համար:

Ջրամիացումն գոյություն ունեցող ոռոգման համակարգին կիրականացվի տեխնիկական պայման ստանալուց հետո:

4. ՀԵՂԵՂԱՏԱՐ ԿՈՅՈՒՂՐ (Հ)

Համակարգը նախատեսված է մթնոլորտային ջրերի հեռացման համար: Խողովակները նախատեսված է իրականացնել D 200մմ, D250մմ և D300մմ տրամագծի ծալքավոր խողովակներից: Բոլոր միացման տեղերում, շրջադարձային անկյուններում, թեքությունների և տրամագծերի փոփոխության, ինչպես նաև ուղիղ հատվածներում համապատասխան թույլատրելի հեռավորության վրա նախատեսվում են կառուցել դիտահորեր: Կոյուղու համակարգի դիտահորերը՝ կլոր կտրվածքի հավաքովի երկաթբետոնե էլեմենտներից են, սեյսմիկ գոտիների համար նախատեսված լրացուցիչ ամրանների ծախսով:

Կոյուղու համակարգը նախատեսվում է իրականացնել 1.8 մ. միջին թաղման խորությամբ: Քանի որ, հեղեղատար կոյուղու միացման կետում անհայտ էր գործող D800մմ տրամագծի հեղեղատարի խորությունը, հետևաբար համակարգին միացման աշխատանքները սկսել միացման կետից, որից ելնելով էլ կորոշվի 10 և 11-րդ դիտահորերի վերջնական խորությունը:

Նախատեսվում է մշակել նախագծանախահաշվային փաստաթղթեր՝ հետևյալ կազմով.

- Գոյություն ունեցող բոլոր մասնաշենքերի քանդման աշխատանքների նախագիծ
- Նոր ուսումնական մասնաշենքի /-երի/ կառուցման նախագիծ, նախատեսված նվազագույնը 500 աշակերտի համար /սենյակների անվանացանկը համաձայն Հավելված N 1.2-ի
- Բազմաֆունկցիոնալ մարզադահլիճի մասնաշենքի կառուցման նախագիծ՝ կից ուսումնական մասնաշենքին /սենյակների անվանացանկը համաձայն Հավելված N 1.2-ի
- Բաց մարզահրապարակ
- Գոյություն ունեցող կաթսայատան վերակառուցման, վերազինման և արդիականացման կամ նոր կաթսայատան կառուցման նախագիծ՝ ըստ անհրաժեշտության, /հիմք ընդունելով նոր տեխնիկական վիճակի եզրակացությունը/
- Ջրի ռեզերվուար

Այլ ենթակառուցվածքներ՝ ըստ անհրաժեշտության և տեխնիկական պայմանների:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ

3.1. Տարածքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները

Նախատեսվող գործունեության իրականացման տարածքը գտնվում է Երևան քաղաքի Նոր-Նորք վարչական շրջան, Ստեփանյան փող. հ . 3 հասցեում, 1. 4363 հա տարածքի վրա:

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չորտափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում: Երևանի բնակչությունը մոտ 1.1 միլիոն է, Երևան համայնքի ընդհանուր տարածքը կազմում է 223կմ², ինչը կազմում է Հայաստանի Հանրապետության տարածքի 0.7%:

3.2 Կլիման

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով: Առանց սառնամանիքների ժամանակաշրջանը կազմում է 213 օր, առանձին տարիներին տատանվելով 163-ից մինչև 234 օր: Օդի միջին ջերմաստիճանն ըստ բարձրության տատանվում է 11.5–12°C: Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը դիտվել է հունվարին՝ մինուս 30 °C, բացարձակ առավելագույնը՝ հուլիս-օգոստոս ամիսներին՝ + 42 °C: Տարածքի կլիման աչքի է ընկնում չորայնությամբ: Գարնան ամիսներին (մարտ–մայիս) դիտվում են մինչև 150 մմ տեղումներ, հունիս–սեպտեմբեր ամիսները խիստ չորային են՝ մինչև 64 մմ: Տեղումների տարեկան քանակը տատանվում է 286 մինչև 353 մմ: Ամռանը օդի հարաբերական խոնավությունը կազմում է 49% – 53%, ձմռանը՝ 73% – 76%, գարնանը՝ 57% – 61% և աշնանը՝ 51% – 70%: Տարածքի համար բնորոշ քամու ուղղությունը հյուսիս-արևելյան է: Ձմռան ամիսներին հաճախակի դիտվում են հանդարտ և թույլ քամիներով եղանակներ, ինչը ռելիեֆի գոգավորության պայմաններում նպաստում է սառը օդի լճացմանը: Հունվար ամսին հանդարտ օրերի թիվը կարող է կազմել 45% – 75%: Չյան ծածկի հաստությունը հասնում է 50սմ, ճնշումը՝ 70կգոմ/մ²: Հողի սառչելու առավելագույն խորությունը կազմում է 70սմ:

Նախատեսվող գործունեության տարածքին ամենամոտը տեղակայված է Արաբկիրի օդերևութաբանական կայանը: Ստորև ներկայացնում ենք Արաբկիր օդերևութաբանական կայանի տվյալները.

Աղյուսակ 1.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը Երևան քաղաքի Արաբկիրօդերևութաբանական կայանի տվյալներով

	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Արաբկիր	1113	-2,9	-0,8	5,1	11,8	16,3	20,8	24,5	24,2	19,9	13,1	6,4	0,1	11,5	-2,1	41

Աղյուսակ 1.2. Օդի հարաբերական խոնավությունը Երևան քաղաքի Արաբկիրօդերևութաբանական կայանի տվյալներով

	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15-ին	
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		հունվարին	օգոստոսին
Արաբկիր	1113	71	73	61	57	59	53	49	50	51	60	70	76	61	69	35

Աղյուսակ 1.3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը Արաբկիրօդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը Միջինամսական / օրականառավելագույն, մմ												Տարեկան	Ձնածածկույթը, մմ	
	Ըստամիսների													Առավելագույն տասնօրյակային ձնածածկույթը, մմ	Տարվա Ձնածածկույթիօրերը
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Արաբկիր	28	31	38	48	55	29	16	8	11	31	30	28	353	50	53
	22	28	26	34	47	47	34	22	47	34	30	26	47		

3.2.2 Օդի որակ

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ բնապահպանության նախարարության “Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն” ՊՈԱԿ-ի (“Հայէկոմոնիթորինգ”) կողմից:

2017թ.-ի ընթացքում օդային ավազանի որակի դիտարկումներ կատարվել են հանրապետության Երևան, Գյումրի, Վանաձոր, Հրազդան, Ալավերդի, Արարատ, Կապան, Քաջարան, Չարենցավան, Մարտունի քաղաքներում, Սյունիք (Սովխոզ) գյուղում: Ընդհանուր առմամբ, վերը թվարկված բնակավայրերում տեղադրված է եղել պասիվ նմուշառման 220 կետ 16 մշտական դիտակետ:

Արագած սարի վրա գտնվող Ամբերդ կայանում գործում է օդի որակի չափման մեքենայացված կայան, որը հանդիսանում է Եվրոպական Մոնիթորինգի և Գնահատման Ծրագրի մաս:

Սակայն ազդակիր համայնքների տարածքում մշտական (ստացիոնար) դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ չեն տեղադրված և մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ “Հայէկոմոնիթորինգ” -ում տվյալներ չկան:

3.2.3. Աղմուկ

Աղմուկի որոշակի բարձրացում սպասվում է շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ:

Աղմուկի ներկայիս մակարդակի ուսումնասիրման նպատակով, 2010թվականի հունիսի 4-ից մինչև 10-ն ընկած ժամանակահատվածում կատարվեցին աղմուկի չափման աշխատանքներ վերոնշյալ համայնքներում: Յուրաքանչյուր համայնքում չափումները կատարվեցին երկու կետում. առաջին՝ ճանապարհի անմիջապես եզրին, երկրորդ՝ ճանապարհից 20մ հեռավորության վրա, դեպի համայնք ուղղությամբ:

Աղյուսակ Աղմուկի սահմանային թույլատրելի մակարդակները

Շենքերի և տարածքների նշանակությունը	Օրվա ժամանակը (ժամ)	Չայնի առավելագույն մակարդակները Լանձայնի համարժեքմակարդակները ԼաէկվդԲԱ
Բնակելի շենքեր,	06.00 ~ 22.00	55
պոլիկլինիկաներ,	22.00 – 06.00	45
ամբուլատորիաներ,		
դիսպանսերներ,		
հանգստյան տներ,		
պանսիոնատներ, ծերերի և		
հաշմանդամների համար տուն-		

ինտերնատներ,
մանկապարտեզներ, դպրոցներ
և ուսումնական այլ
հաստատություններ,
գրադարաններ շենքերին
անմիջապես հարող
տարածքներ

Ծանոթություն: Աղմուկից պաշտպանված տեսակի բնակելի շենքերի պարսպող կառուցվածքներից 2մ հեռավորության վրա, քաղաքային և շրջանային նշանակության հիմնական փողոցներին և երկաթուղային գծերին հարող հյուրանոցների և հանրակացարանների շենքերում, տարածքներում ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտից առաջացող աղմուկի համարժեք և առավելագույն մակարդակները դԲԱ-ով թույլատրվում է ընդունել նշված մեծություններից 10 դԲԱ-ով ավել (ուղղում=+10 դԲԱ):

Աղբյուրը: ՀՀ ԱՆ հրամանը “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2-III-11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին, հրաման N138, 6 մարտի, 2002

3.3 Թափոնների և այլ նյութերի կառավարում


Նախատեսվող գործունեության ընթացքում կառաջանան շինարարական թափոններ /մնացորդային հողային զանգվածներ, քանդման արդյունքում առաջացող թափոններ, շինաղբ և այլն/, որոնք սահմանված կարգով նախատեսված է տեղափոխել Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված աղբավայր: Իսկ շինարարության ընթացքում աշխատողների կենցաղային թափոնները կհեռացվեն մոտակա աղբահավաք տարողություններ: Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շին աղբը և մնացորդային գրունտները տեղափոխվելու են համայնքի դեկավարի հետ համաձայնեցված՝ շինարարական թափոնների աղբավայր:

Նախատեսվող գործունեության ընթացքում վտանգավոր թափոնների առաջացում չի կանխատեսվում: Աշխատանքների ընթացքում քսայուղերի, հեղուկ վառելիքի հնարավոր մնացորդային քանակների առաջացման իրավիճակում նախատեսվում է նշված նյութերը պահել հատուկ անթափանց և փակ տարաներում, որոնք հետագայում որպես երկրորդային նյութ կվերաօգտագործվեն շինարար կապալառուի կողմից այլ աշխատանքներում, կամ պայմանագրային հիմունքներով կհանձնվեն այդ թափոնները վերամշակող կազմակերպություններին:

3.4 Սոցիալ-տնտեսական պայմանները

Նոր-Նորք վարչական շրջանը զբաղեցնում է 1411 հա տարածք: Նոր-Նորքում բնակվում է մոտ 132,6 հազար մարդ: Վարչական շրջանը ընդհանուր սահմաններ ունի Ավանի, Կենտրոնի, Էրեբունու, Նորք Մարաշի, Քանաքեռ-Զեյթունի հետ: Արտաքին սահմանագծով հարում է Կոտայքի մարզին:

Նկ. 1 Կարեն Դեմիրճյանի անվան 139 դպրոցի իրադրային սխեմա



4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ
ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

4.1 Ռիսկերի գնահատում

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա կդրսևորվեն որոշակի բացասական ազդեցություններ, սակայն վերջիններս կկրեն ժամանակավոր բնույթ: Ազդեցությունները իրենց բնույթով կլինեն սահմանափակ և կարճատև և պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքներով:

Շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված են արտանետումներով, որոնք կարող են առաջանալ՝

- Քանդման ընթացքում /գոյություն ունեցող շինության միջնորոմներ, հատակ, տանիք և այլն/,
- Նոր կառուցվող շենքերի շինարարության ընթացքում
- Հիմքերի փորման ընթացքում
- Դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:
- Հողային զանգվածների և շինադրի տեղափոխման հետ կապված,
- Շինարարական տեխնիկայի շահագործմամբ,
- Բետոնային աշխատանքների իրականացմամբ,
- Շինհրապարակների տեղադրման և վառելիքաքսայուղերի պահեստավորման հետ կապված,
- Շինարարության ընթացքում մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից մերձակա բնակչությանը պատճառվող անհանգստությամբ,
- Շինարարական տեխնիկայի շահագործման ընթացքում աղմուկի մակարդակի ավելացմամբ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

4.2 Օդի աղտոտում

Վերկառուցվող շենքերի շինարարության ընթացքում հիմնականում կանխատեսվում է օդի աղտոտում՝ պայմանավորված հողային աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք առաջանում են առկա

շինությունների մի մասի քանդման, նոր շենքերի կառուցման հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառելիքի աշխատանքի դեպքում:

Շինարարության ընթացքում արտանետումները կլինեն տեղայնացված, ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը: Հնարավոր վնասակար ազդեցությունները կբացառվեն կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում, մասնավորապես՝ փոշու արտանետումները նվազեցնելու համար կիրականցվի շինհրապարակի պարբերաբար ջրցանում, շինանյութ տեղափոխող մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի թափքի ծածկման պայմաններում, ինչպես նաև կիրականացվի շին հրապարակ մուտք գործող և լքող մեքենաների անվադողերի լվացում:

Հարակից բնակելի և հասարակական շենքերից բողոքների դեպքում կիրականացվի նաև օդի աղտոտվածության գործիքային չափումներ, որոնք կհամեմատվեն օրենսդրական նորմերի և ելակետային տվյալների հետ:

4.3 Աղմուկի և թրթռումների ազդեցություն

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին: Մակարդակների չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում: Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը: Հարակից տների և շենքերի բնակչության հնարավոր բողոքների դեպքում կիրականացվեն աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ, իսկ շինարարության ընթացքում որպես կարևորագույն միջոցառումներ, անհրաժեշտ է՝

- Խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգալուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը;
- Աղմկահարույց աշխատանքները հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:
- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:
- Բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը:

4.4. *Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն*

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինարարական աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով: Անհրաժեշտ ջրաքանակը շին հրապարակ կմատակարարվի տարածքում գոյություն ունեցող ջրամատակարարման ցանցից:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրը օգտագործվելու է աշխատողների խմելու և կենցաղային նպատակների, ինչպես նաև փոշենստեցման համար:

Շինարարությունը իրականացնող անձնակազմը օգտվելու է ժամանակավոր տնակներից:

Ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու են քաղաքային ցանցերին միանալուց հետո: Այդ միացումները կատարվելու են առաջնահերթ:

Աշխատողների խմելու և կենցաղային նպատակներով ջրաձախսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$W = (n \times N + n_1 \times N_1) \times T$$

Որտեղ՝ n – տեխնիկական աշխատողների և ծառայողների թիվն է 40

N – ջրաձախսի նորման՝ - 0.016մ³,

N_1 – բանվորների թիվն է,

N_1 – ջրաձախսի նորման բանվորների համար՝ - 0.025մ³/մարդօր

T – տարեկան աշխատանքային օրերի թիվը՝ 260 օր:

Աշխատողների թիվը շինարարության տարբեր փուլերում տատանվում է 2000-ից մինչև 3000: Որպես միջին թիվ կարելի է ընդունել 2300 հոգի, որից 40-ը ինժեներա-տեխնիկական անձնակազմ:

Այսպիսով՝ $W = (40 \times 0.016 + 2260 \times 0.025) \times 260 = 14856.4$ մ³/տարի, միջին օրեկան 57.14մ³:

10 տարվա ընթացքում՝ 148564.0 մ³:

Արտադրական նպատակներով ջրի ձախսը պայմանավորված փոշեառաջացման օջախների ջրմամբ:

Այդ ձախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$V_1 = S \times K \times T \times K_1,$$

Որտեղ՝ S – թրջվող մակերեսն է, երկու կամ երեք տեղամասերում, ընդամենը՝ 1000մ²,

K – ջրցանման նորման՝ 0.0015մ³/1մ²

T – ջրցանի /չոր եղանակի/ տարեկան օրերը, 240 օր

K_1 – ջրցանի օրական քանակը, 2

Այսպիսով՝ $V_1 = 1000 \times 0.0015 \times 240 \times 2 = 720$ մ³/տարի:

Միջին օրեկանը կազմում է 3մ³: 10 տարվա ընթացքում՝ 7200 մ³:

Ջրահեռացում

Ջրցանը դասվում է անվերադարձ ջրօգտագործման շարքին և արտահոսք չի առաջանում:

Կենցաղային կեղտաջրերի ծավալը հաշվարկվում է հետևյալներով՝

$V_1 \times (1 - L)$, որտեղ L – կորստի գործակիցն է, ընդունվում է 5% (0.05)

$14856.4 \times (1 - 0.05) = 14113.6 \text{մ}^3$, միջին օրեկան՝ 54.28մ^3 : 10 տարվա ընթացքում՝ 141136մ^3 :

Շինարարությունը իրականացնող անձնակազմը օգտվելու է ժամանակավոր տնակներից, որոնք կտեղադրվեն մինչև շինարարական աշխատանքների սկիզբը և կմիացվեն տարածքում առկա ջրագծին և կոյուղուն:

Ոռոգման ջրապահանջ

$$W_{\text{ոռոգ.}} = 0.003 \times S \times k \times T$$

S – ոռոգման ենթակա տարածքների մակերեսն է, ընդամենը կանաչապատ տարածքի մակերեսը նախատեսված է 6000մ^2 ,

k – ջրման քանակն է օրվա ընթացքում, 2

T – տարվա ընթացքում ոռոգման օրերի առավելագույն թիվն է, 180

0.003 – 1 ք.մ. ջրցանի նորմը,

$$W_{\text{ոռոգ.}} = 0.003 \times 6000 \times 2 \times 180 = 6480 \text{մ}^3/\text{տարի}$$

Միջին օրական՝ $36 \text{մ}^3/\text{օր}$:

4.5. Բնապահպանական միջոցառումներ

Շրջակա տարածքների և գործունեության ազդեցության ենթակա մոտակա բնակչության վրա բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված են շինարարական աշխատանքների իրականացմամբ, կրում են ժամանակավոր բնույթ և ունեն կարճատև ազդեցություններ: Այդ ազդեցությունները կարող են կանխվել կամ նվազեցվել բնապահպանական կառավարման պլանով (ԲԿՊ) նախատեսված՝ սոցիալական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների և բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացման արդյունքում, որին պարտավորեն հետևել՝ շինարարը, հսկող և վերահսկող մարմինները:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա տարածքների և սոցիալական միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների կանխման, կամ մեղմացման միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների ներկայացվում են ստորև:

4.5.1. Մթնոլորտային

- Օդային ավազանը ադտոտումից պահպանելու համար նախատեսված են՝
- Շինարարական աշխատանքների /փոշեառաջացման աշխատանքներ/ ընթացքում իրականացնել ջրցան,
- Սորուն նյութերի ժամանակավոր կուտակումները և շինհրապարակը ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով՝ կանխարգելելու համար փոշուտարածումը,
- Պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաբերում:
- Գրունտի և սորուն նյութերի տեղափոխումն իրականացնել ծածկված թափքերով բեռնատարներով:
- Խուսափել անորակ վառելիքի օգտագործումից:

4.5.2 Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- Բետոնի խառնուրդի պատրաստման համար օգտագործել տեխնիկական որակի ջուր՝ տարածքում առկա ոռոգման ջրացանցից,
- Ջրցանի ծավալները հաշվարկել այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- Տարածքի հոսքաջրերը միավորել մեկ բակային ցանցում և միացնել գոյություն ունեցող հեղեղատար ցանցին:

4.5.3. Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով անհրաժեշտ է՝

- Շինարարական նյութերի և քայուղերի ժամանակավոր պահեստները տեղադրել բետոնապատ մակերեսի վրա, որը ապահովված կլինի հոսակորուստների հավաքման համակարգով,
- Աշխատանքների ընթացքում կառաջանա 3540տ ծավալով շինարարական աղբ, որը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր,
- Հանված հողային գրունտները՝ 2030մ³, պահեստավորում են թույլատրված վայրում, անհրաժեշտության դեպքում ետլիցք, կամ ավելցուկի օգտագործում տարածքի բարեկարգման նպատակով
Շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքը բարեկարգել, վերականգնել և մաքրել:

Շինարարական և կենցաղային աղբով շրջակա տարածքների աղտոտումը բացառելու նպատակով նախատեսվում է՝

- Շինհրապարակում բացառել թափոնների ժամանակավոր կուտակումները,
- Թափոնները ժամանակին տեղափոխել հատկացված վայրեր՝ համայնքի ղեկավարի կամ աղբավայրը շահագործողների հետ նախապես կնքված պայմանագրերի համաձայն,
- Վտանգավոր թափոնների հանձնում ընկերությունների, որոնք ունեն վտանգավոր նյութերի վնասազերծման, կամ տեղակայման արտոնագիր,
- Շինանյութերի ձեռք բերում միայն լիցենզավորված մատակարարներից:

4.5.4. Աղմուկ

- Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝
- Շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- Պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- Շինարարական տեխնիկայի միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:
- Խուսափել բարձր աղմուկ ունեցող մեքենաների և սարքավորումների օգտագործումից, անհրաժեշտության դեպքում տեղադրել խլացուցիչներ:

4.5.5. Կենսաբազմազանություն

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունը իրականացվելու է Երևան քաղաքի բնակեցված և կառուցապատված թաղամասում, կենսաբազմազանությանը վտանգ չի սպառնում և բնապահպանական միջոցառումներ չեն նախատեսվում:

Ճանապարհների խաթարման և ծանրաբեռնվածության հետևանքով բնակչությանը պատճառված անհանգստությունը մեղմելու նպատակով նախատեսվում է՝

- Շինարարական հրապարակում բեռնատար մեքենաների ժամանակավոր կայանման համար տարածքների տրամադրում,
- Շինհրապարակում խուսափում՝ շինարարական ու կենցաղային աղբի այրումից և կուտակումից,

- Շինարարական աշխատանքների վերաբերյալ մոտակա բնակչությանը իրազեկում, որոնց արդյունքում կարող են ավելանալ փոշու քանակները, աղմուկի մակարդակը և ժամանակավորապես փակվեն ճանապարհները,
- Ցուցանակների տեղադրում, ինչպես նաև ժամանակավոր անցումների նախատեսում՝ որպես այլընտրանքային ճանապարհներ:

Շինարարության փուլում հնարավոր սոցիալական ազդեցություններից խուսափելու նպատակով նախատեսվում է՝

- Թույլ չտալ շինարարական աշխատանքների կատարումը սահմանված ժամերից դուրս.
- Շինհրապարակը ցանկապատել, պարսպապատել, ցանցապատել և վերահսկել՝ կանխելու համար չլիազորված անձանց մուտքը շինհրապարակ,
- Վտանգավոր տեղամասերում տեղադրել նախազգուշացնող նշաններ,
- Որակավորված աշխատակիցների միջոցով իրականացնել սարքավորումների պարբերական զննումներ
- Շինարարների համար՝ անվտանգության աուդիտների, առաջին օգնության և անվտանգության դասընթացների պարբերաբար կազմակերպում և իրականացում:

4.5.6 Թափոնների և այլ նյութերի կառավարում

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա հիվանդանոցային համալիրի վերակառուցման ընթացքում, դա շինարարական աղբն է, որը կառաջանա ինչպես առկա հիվանդանոցային համալիրի քանդման, այնպես էլ նոր շենքի կառուցման աշխատանքներից:

Շինությունների քանդման արդյունքում կառաջանա մեծ ծավալով տարբեր տեսակի շինարարական աղբ և թափոններ, որոնց մի մասը կօգտագործվի շինարարական աշխատանքների համար, իսկ մնացածը կհեռացվի համապատասխան աղբավայրեր:

4.6. Աշխատանքի անվտանգություն և առողջություն

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները շինարարության փուլում կիրականացվեն կապալառուի կողմից՝ համաձայն ԲԿՊ-ում նկարագրված միջոցառումների:

4.7 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը

- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլորտի աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:

- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:

- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

- Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական և կոլեկտիվ պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնություն:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

4.8 Փոխհատուցում

Ինչպես նախորդ ենթակետերում նշվել է, բնապահպանական միջոցառումների նպատակն է նվազեցնել գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և վերականգնել բոլոր այն տեղամասերի նախնական վիճակը, որոնք կենթարկվեն գործունեության ազդեցության: Շինհրապարակի համար մշակվելու է տարածքների վերականգնման, կանաչապատման և բուսականության վերականգնման պլան: Կանաչապատման աշխատանքներն իրականացվելու են նախագծման առաջադրանքի պահանջներին և տարածքի համար մշակվող տարածքի կանաչապատման սխեմային համապատասխան: Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը նախատեսվում է բարեկարգել և ռեկուլտիվացնել: Այն տեղամասերում, որոնք ենթակա են գործունեության ազդեցության, նախատեսվում է իրականացնել նախնական ուսումնասիրություն և ետնախազծային մոնիթորինգ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

5. ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ և ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

Ռիսկերի նվազեցումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում և կազմակերպել իրականացվող աշխատանքների մոնիթորինգ:

ԲԿՊ-ն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների նկարագրությունը, որոնք հնարավոր են ծրագրի իրականացման նախագծման, շինարարության և շահագործման փուլերում և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը:

ԲԿՊ պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիթորինգի գործողություններ՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին:

Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ում ներառված միջոցառումների իրականացման համար և իր հերթին համապատասխան պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով շինարարության կապալառուի կողմից կիրականացվի կանոնավոր մոնիթորինգ, որի շրջանակներում նախագծային կազմակերպության բնապահպանության մասնագետի կողմից՝ յուրաքանչյուր փուլիմասով, կիրականացվեն մոնիթորինգի ստուգայցեր՝ երկու շաբաթը մեկ անգամ (երկու անգամ մեկ ամսվա ընթացքում): Արդյունքները գրանցվելու են մոնիթորինգի ստուգաթերթիկում:

ԲԿՊ-ն, որը ներկայացված է հավելված 1-ում, ընդգրկվելու է ծավալաթերթերում և որպես անբաժանելի բաղադրամաս կցվելու է պայմանագրային փաստաթղթերին:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Ծրագրի Գործողու- թյունները	Հնարավոր Ազդեցությունները	Առաջարկվող մեղմացնող Միջոցառումները	Մեղմացնող միջոցառման պատասխա- նատուն	Մոնիթորինգի պատասխա- նատուն
Նախագծային փաստաթղթերի պատրաստում	Բացասական ազդեցություններ՝ շինարարության փուլում, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային նախագծում,	- Աշխատանքային նախագիծը անհրաժեշտ է մշակել հաշվի առնելով ԲԿՊ-ում պլանավորված մեղմացնող միջոցառումները, որոնք պետք է ներառված լինեն նաև պայմանագրային փաստաթղթերում: - Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունների ձեռք բերում - Շինհրապարակը լուսավորվելու է տարածքում գործող ենթակայանից, ըստ տրամադրված տեխ. պայ մ ան ի	Շինարարության կապալառու	Տեխնիկական վերահսկող Երևանի քաղաքապե- տարան
Շինարարական Հրապարակի Բոլոր գործողությունները	ԲԿՊ-ի բնապահպանական պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող է հանգեցնել շրջակա միջավայրի վատթարացման:	- Տարածքում առկա ինժեներական ենթակառուցվածքների անջատման, կամ տեղափոխման վերաբերյալ թույլտվության ձեռք բերում, սեփականատիրոջ հետ համաձայնեցում Խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ Պահանջվող աշխատանքային պահանջները - Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/ Աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում: - Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները, համայնքը և բնակիչները պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ - Աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան բնակիչների և շրջակա տարածքների վրա: - Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և	Կապալառու	
Աշխատողների, Ինչպես նաև շինհրապարակի մերձակայքում բնակվող մարդկանց անվտանգություն				

		պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) - Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ - Անհրաժեշտ է պարսպապատել շինարարական հրապարակները, իսկ ներքուստ և արտաքուստ վերանորոգվող շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով		
Հողային աշխատանքներ, շինանյութերի փոխադրումներ, այլ շինարարական աշխատանքներ	Շին տեխնիկայի շահագործումից փոշու և վնասակար նյութերի արտանետումներ;	- Օդի աղտոտման և փոշու կառավարում Օդի որակի չափագրումներ կիրականացվեն ազդակիր անձանց համապատասխան բողոքների դեպքում: -Անհրաժեշտ ապրանքային բետոնը շին հրապարակ կբերվի բետոնաշաղախային հանգույցից՝ բետոնատար մեքենաներով (պտտվող թափքով), - Անհրաժեշտ է իրականացնել շին հրապարակի պարբերական ջրցանում փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով; - Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և հնարավորինս ծածկել կուտակված նյութերը փոշու տարածումից խուսափելու համար; - Անհրաժեշտ է սահմանափակել մեքենաների արագությունը փոշու քանակը նվազեցնելու նպատակով; - Անհրաժեշտ է շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերը լվանալ - Գոյություն ունեցող շինությունների վերակառուցման, նոր մասնաշենքերի կառուցման և շինությունների քանդման աշխատանքների ընթացքում հատուկ տարողություններ և աղբավայրեր կնախատեսվեն տարբեր տեսակի շինարարական աղբի հեռացման համար - Աշխատանքների ընթացքում կառաջանան շինարարական թափոններ և աղբ, որոնք անմիջապես կտեղափոխվեն կամ ընկերության արտադրամաս, կամ համապատասխան թափոնավայրեր և չեն առաջացնի կուտակումներ - Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք	Շինարարության կապալառու	Տեխնիկական վերահսկող, Երևանի քաղաքապետարան Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին

		է գերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով - Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի		
Թափոնների կառավարում	Շին աղբի տեղադրում անհամապատասխան վայրերում; Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ:	- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: - Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք է տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից՝ դեռ շինհրապարակում և ըստ առաջացման՝ տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: - Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից - Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով՝ նախատեսվածին համապատասխան - Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել	Շինարարության կապալառու	Տեխնիկականվերահսկող, Երևանի քաղաքապետարան
Աղմուկի և թրթռումների կառավարում	Շին աշխատանքների արդյունքում աղմուկի և թրթռումների մակարդակի աճ:	- Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին: Կիրականացվեն մակարդակների չափագրումներ ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում: - Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգալուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը; - Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին: - Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով: - Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը;	Շինարարության կապալառու	Երևանի քաղաքապետարան
Շինհրապարակի		- Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել	Շինարարության	Երևանի

վերականգնում		շինարարության հետ կապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատումը և այլն; - Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները; - Մաքրել շինհրապարակը կենցաղային և այլ աղբից և հեռացնել յուղի, վառելիքի արտահոսքի հետքերը; - Մշակել ընդունման-հանձնման ակտի ստուգաթերթիկի բոլոր պահանջները;	կապալառու	քաղաքապետարան
--------------	--	--	-----------	---------------

Մեղմացնող միջոցառումների ինդիկատիվ արժեքը գնահատվում է նախագծային աշխատանքների արժեքի մոտ 1,2%

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆՐԻ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	(ն՞վ է իրականացնում մոնիթորինգը)
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	- Մեքենաներիևտեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Բնահողով, շին աղբով բարձված մեքենաների թափքը պետք է թրջել և ծածկել պոլիէթիլենային թաղանթներով, թույլ չտալով փոշու ամպի գոյացություններ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում	- Շինհրապարակ - Շինանյութերիևաղբիտեղափոխման երթուղիներ	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու ՀՀ քաղաքաշինության կոմիտե

Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս, Երևան քաղաքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Հողային աշխատանքներ	- Հանված հողային գրունտները պահեստավորում են թույլատրված վայրում - Անհրաժեշտության դեպքում ետլիցք, ավելցուկի օգտագործում տարածքի բարեկարգման նպատակով	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Պատվիրատու Կապալառու քաղաքապետարան
Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարում	- Շինարարական թափոնների ժամանակավոր պահեստավորում հատուկ հատկացված տարածքներում - Թափոնների ժամանակավոր օտարում պաշտոնապես նշանակված վայրերում	Շինհրապարակ Թափոնների հեռացման վայր	Շինհրապարակի գնում Գործընթացների ստուգում	Շինարարության ընթացքում և այն ավարտելուց հետո	Կապալառու ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Կենցաղային աղբի կառավարում	- Համապատասխան քանակի աղբամանների առկայություն - կենցաղային աղբի ժամանակին հեռացում դպրոցի տարածքից՝ արտահանման և աղբահանության միջոցառումների շրջանակներում	Դպրոցի սեփականություն հանդիսացող տարածքում	- Դպրոցի տարածքի ստուգում Արտոնագրված աղբահանությամբ զբաղվող կազմակերպության դպրոցի կողմից կնքված պայմագրի առկայության ստուգում	Դպրոցի գործունեության ողջ ընթացքում	Կապալառու ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Շինարարական հրապարակի	Շինարարական հրապարակի ժամանակավոր պահեստի /բետոնախառնիչի/	Շինարարական հրապարակ,	Ստուգման գործընթացներ	Շինարարության ավարտական փուլ	Կապալառու ՀՀ քաղաքաշինության

բարեկարգում	ապամոնտաժում, և տեղանքի բարեկարգում - Շինհրապարակի վերջնական մաքրում, տարածքի բարեկարգում և վերականգնում	Ժամանակավոր պահեստներ			կոմիտե
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Շինհրապարակի վերականգնում և տարածքի բարե- կարգում	- Շինհրապարակը մաքրված է, նյութերը և թափոնները հեռացված են, - բոլոր մակերեսները, այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են, - շինհրապարակի տարածքը բարեկարգված է	Տեղամասեր Կատարած Ստուգայցեր	Շինհրապարակի զննում Ստուգայցեր	Շինարարության ավարտին	Կապալառու ՀՀ քաղաքաշինության կոմիտե Կապալառու ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- ՀՀ Օրենք «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», 2014 թ. Հունիսի 21:
- ԱԶԲ 2015, Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ:
- Շինարարական Կլիմայաբանություն 2011: ՀՀՇՆ II 7.01-2011 ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. Սեպտեմբերի 26-ի N167-Ն հրաման:
- Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР1984, Москва.
- <Http://xn--80aajzhcnfck0a.xn--p1ai/publicdocuments/1310049.pdf>
- ՀՀ Կառավարության որոշում N 1325-Ն «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին», 19 նոյեմբերի 2014 թ.:
- [Www.arlis.am](http://www.arlis.am)
- [Www.atdf.am](http://www.atdf.am)
- ՀՀ կառավարության N 862-Ա որոշում: Անհատույց սեփականության իրավունքով գույք հանձնելու և քանդման (ապամոնտաժման) աշխատանքներ կազմակերպելու մասին: 25 օգոստոս 2016, URL:<https://www.e-gov.am/gov-decrees/item/27593/>:
- Ավտոմոբիլային տրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հաշվարկման մեթոդական ցուցումներ, Մոսկվա, Հիդրոմետհրատ – 1983:
- ՀԲ 2015: Բնապահպանական և սոցիալական գնահատման և ուսումնասիրության շրջանակ:
- ՀՀ կառավարության որոշում N160-Ն, 2 փետրվար, 2016թ: Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին: